



մանքներն համեմատ թվաքանակներն զիջելով  
երեք գրքերն էլ ապօրինի են այս 1881 տարին  
Մովսէս Վարդանանյանի և Բնիկ Թեմանի տպա-  
րանում, Թիֆլիսում: Գրքերի գները շատ է քան  
են նշանակված: Պէտք է խոստովանվեն որ պ.  
Գրիգոր Շահաբադյան շատ լաւ ընտրութիւն-  
ներ է անում իր թարգմանութիւնների համար:  
Չենք կարող չը միշտ որ պ. Վարդանանյան տը-  
պարանը շատ մաքուր կերպով է տպում գրքերը:

Պ. Երեւանը Ապրիլեան խնդրում է միայն տպել  
որ պատրաստի թարգմանած ռուս տպագրութեան  
համար Բ. Շմիտի «Маленький эмигрантъ» և  
Օստրովսկու «Утро молодого человека»: Նոյն-  
պէս սկսել է թարգմանել Նիկիտի «Le petit  
berger et son chien» և Լոսի Ֆրեդերի «La ver-  
tu persecutée»: Վերջապէս մտադիր է թարգմա-  
նել և Գոմ-Վիդի «Бригадиръ» անունով կո-  
մէդիան:

Օղեսայում, ինչպէս հաղորդում է «Порядокъ»  
լրագիրը, պատահելն նոյնքան լի էր մի քա-  
նի անկարգութիւններ: Երան, Երան և հինգ հո-  
գուց բաղկացած խմբեր, որ ցերեկով յարձակ-  
վում էին խանութների վրա, կտորում էին ա-  
պակներ, մանում էին խանութներ, հարուստում  
էին խանութատերերին, գողանում էին փող և  
թանկագին իրերէն: Եւ անհետանում էին: Եւ  
բաշտանագրութեան կարգադրութիւն արաւ բազ-  
մացնել պոլիցիականներին և ձիւղոր ժանդարմ-  
ներին թիւը:

Բնիկ Թեման արդէն յայտնի է, որ երկու  
Ֆրանսիացի դերասաններ Սարա Բէրնար, Օդէ-  
սայի թատրոնից կտաքով դուրս գալուց յետոյ  
ենթարկվեցան քանի խառնակիչների յարձակ-  
մանը, որոնք դերասանուհուն ոգևորութեամբ ող-  
ջուող մօտ մեզ հազար ամբոխի միջից սկսեցին  
քարեր արձակել Սարա Բէրնարի կողմի վրա,  
կանչելով «Կորչէ՛ն հրէաները»: Փարբեր կտորեցին  
կտաքի ապակիները, վիրաւորեցին դերասանու-  
հուն և նրա հետ նստած իր դերասանական խմ-  
բի կառավարչին: Սարա Բէրնար հասնելով հիւ-  
րանոցը, որտեղ իջել էր, դիմեց իրան ուղեկցող  
անձանց, ասելով որ իր ամբողջ կեանքը կը պա-  
հի, որպէս յիշատակ այն քաղաք, որ նկատեցաւ  
նրա կողմէ: Որովհետեւ նա այդ տեսակ ըն-  
ծանքի դեռ իր կեանքում երբեք չէ տեսել և  
յոյս ունի որ երբեք չի տեսայ: Օղեսայի նա-  
հանգիստը այնուհետեւ, քանի որ Սարա-Բէրնար  
Օդէսայում էր, հրամայեց մի խումբ ձիւղոր  
զինուորականներին ուղեկցել դերասանուհու կառ-  
քը, ուր և գնար նա: Օղեսայից Ֆրանսիացի ար-  
տիստներն դնաց Կիւով, այնտեղից պէտք է ու-  
ղերով Մոսկով և Ս. Պետերբուրգ:

Ռուս երգիչ Սլավոնսկի, որ երկու տարի սը-  
րանից անտալ իր երգիչների խումբով մի քանի  
կոնցերտներ տուեց թիֆլիսում, այժմ շարունա-  
կում է ժողովրդական կոնցերտներ տալ Ռու-  
սաստանում: Նորիդեան «Порядокъ» լրագրում  
տպված Մարկովի մի յօդուածը շատ իրաւացի  
կերպով նկատում է որ ժողովուրդը ամենից ա-  
ւելի սիրում է երգ, մանաւանդ խորական երգը,  
որ մեծ կրթական ազդեցութիւն ունի ժողովու-  
րի դեղարուստական զգացմունքի վրա և ազն-  
ւացնում է այդ զգացմունքները: Մենք մեր կող-  
մից կաւելացնենք որ մեր հայրը ժողովուրդն էլ  
շատ է սիրում երգեցողութիւն և եթէ մեր ե-  
րաժշտներից մինը կազմէր երգիչ սիրողների  
խումբը, որ կերպէր հայոց երգեր (ի հարկէ եր-  
գերը պէտք է յօրինել, փոխադրել, կազմել) նա  
ոչ թէ միայն մեծ աջողութիւն կունենար մեր  
հասարակութեան մէջ, բայց և կարող էր աշա-  
ղին փողեր վատարկել, մանաւանդ, եթէ ինչպէս  
Սլավոնսկիին անում է, տարին մի անգամ գոնէ,  
պատէր իր խումբով ամբողջ Անդրկովկասում:  
Մեր մասնագէտ երաժիշտներից ոչ ոք չէ մոա-  
ծում փոխադրել խորական երգերի վրա և յար-  
մարեցնել խմբային կանոնաւոր երգեցողութեանը  
մեր ժողովրդական երգերը և մեր եկեղեցական  
երգաները: Վերջապէս և եւրոպական մօտիվ-  
ները կարելի էր յարմարեցնել հայոց խորական  
երգեցողութեանը, ինչպէս անկատար կը լինէր  
սկզբից այդ տեսակ փորձը, նա այնու ամենա-  
նիւ, փամբակով մեծ օգուտներ կը բերէր, իսկ  
գործին ձեւաւորելու եղանակներն մեծ շահ էլ կը  
տար: Յաւն այն է որ մեր հայ երաժիշտներից  
ոչ ոք չէ մտածում այդ գործի վրա, որովհետեւ

բոլորն էլ իրանց ոգով, իրանց ուղղութեամբ  
օտար են ամբոխի պահանջներին և նրա բնաւ-  
ութիւնը չեն ճանաչում:

Այս րօպէիս ստացանք Վ.Ա.Ղ.Ա.Ր.Շ.Ա.Պ.Ա.Ս.Ի.Յ. պ.  
Լեոն խանութանցից մի հեռագիր, որ մի շատ  
ցաւալի լուր է հաղորդում մեզ: Մեր համարա-  
րանական սակաւաթիւ արեղաններից մինը պա-  
կասեց մեզ: Նոյնիւրի 30-ին, ցերեկով ժամը  
12-ին վախճանվեցաւ Վահան վարդապետ Բա-  
տանանց: Մենք յիշում ենք այն ժամանակները,  
երբ մեր համարաւորական երիտասարդութիւնը  
ձգտում էր արեղանութեան կոչմանը: Եւ ահա,  
ոչինչ հետեանք չը հաւանք, իր երազները փշ-  
ված անանկով, վախճանվում է նրանցից մինը  
երիտասարդ հասակում:

«Порядокъ» լրագիրն հաղորդում են որ Ս.  
Պետերբուրգի մի հայ երիտասարդ սիրող, պ.  
Թամաշիվ իրաւունք ստացաւ կազմել երեք ներ-  
կայացումներ յօգուտ ֆորմ-Ասիայի չքաւոր հա-  
յերի: Այդ ներկայացումների մէջ կը մասնակցեն  
ամենապայտի արտիստները և արտիստուհիները:

### ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱ  
Բելիքորի մէջ մարիդ Զարաինգտոն  
արտասանեց մօտաւորապէս հետեւեալ ճա-  
ռը: Մեր հակառակորդները ի միջի այ-  
լոց մեղադրում են մեզ նորանում, որ երբ  
ընդդիմադրական կուսակցութիւն էին կազ-  
մում, մենք դատաւարում էինք Բել-  
լիսի դաշնակցութեան միջնորդութիւն կազ-  
մուց յետոյ նպատակեցինք նրա իրաւործ-  
մանը: Բայց մենք երբեք անպայման չենք  
դատաւարում այդ դաշնակցութեան, մենք մի-  
այն ասում էինք, որ նա կարող է աւելի  
լաւ լինել: Մեր հակառակորդները այդ  
դաշնակցութեան մէջ տեսնում են նշանակութիւն  
տալիս էին այն մասին, որ պահանջում էր  
թիւրքաց երկրի մաքրելը ուստաց գործ-  
րից, իսկ թիւրքերի հակառակ ժողովուրդների  
վիճակի թնթեացնելը նրանց համար եր-  
կրդական հարց էր: Մինչև անգամ  
այժմ նախկին միջնորդութեան անդամներից  
մէկը, լորդ Սալիսբուրի, դատարկ բան է  
համարում այն հարցը, թէ մի փոքր կտոր  
հողը Ալբանիային թէ Չերնոգորիային կը  
պատկանի: Նա մտածում է, որ երբեք մի  
կտոր հողից կտրված է ամբողջ երկրի  
բարբորութիւնը և խաղաղութիւնը: Բայց  
հարցը նրանում է, որ պէտք էր ստիպել  
թիւրքերին դաշնակցութեան կողմերի  
համար էլ միատեսակ պարտաւորեցուցիչ  
համարել: Եթէ Ռուսաստանը պարտաւոր էր  
մաքրել թիւրքից հետեւապէս թիւրքից  
էլ պէտք է կատարէր այն բոլոր պարտա-  
կանութիւնները, որոնցով այդ գործը պայ-  
մանաւորված էր: Եւ րօպէական միւս պե-  
տութիւնների օգնութեամբ մենք կարո-  
ղացանք ստիպել Բ. Դրանը, որ նա կատա-  
րէր իր պարտականութիւնները: Յունաստա-  
նի և Չերնոգորիայի վերաբերութեամբ, իսկ  
այժմ լորդ Կիլիսիան աշխատում է նոյն  
բանն անել և Հայաստանի վերաբերու-  
թեամբ: Եթէ մենք չենք կամենում, որ եւ-  
րոպական խաղաղութիւնը անգաղապ խան-  
գարի թիւրքերի կռիւների պատճառով  
իր հպատակ քրիստոնէայ ազգութիւնների  
հետ, ուրեմն մենք պէտք է նրան հաւա-  
տացնենք, որ ոչ թէ միայն Ռուսաստանը,  
այլ և ամբողջ Եւրոպան հակում է, որ  
թիւրքի կատարել իր պարտականու-  
թիւնները: Բրիտանի մէջ արտասանած  
ճառով լորդ Սալիսբուրի ասաց, որ Անգլիա-  
յի շահերին համապատասխան և աջող չէ  
կարելի անումանել այն քաղաքականութիւնը,  
որ թշուառաց Ռուսաստանին հասցնել  
կապեան երկաթուղին մինչև Ասիաւոր և

իր առաջաւոր գրքերը մինչև Մերի-Հաս-  
ցնել: Զարմանալի է այն իրողութիւնը, որ  
Միջին Ասիայի քարտէզը եռանգով ուսում-  
նասիրող քաղաքական մի գործիչ կարող էր  
չը նկատել, որ Կասպեան ծովից սկսած  
մինչև Ասիաւորի կէսն էլ չէ հասցրած և  
որ ոչ մի ուսուցիչ ոտք չէ կոխել  
Մերի-Թիւրքի միջնորդութեան երկրորդ  
Բայց զուցէ այդ հանգամանքը նշանաւոր  
չէ: Բայց ենթադրելով, որ նրա ցոյց տուած  
փաստերը ճշմարիտ են: Նախկին կա-  
ռավարութիւնը ինչ միջոցներ գործ գրեց  
այդ փաստերի առաջն առնելու համար:  
Լորդ Սալիսբուրի յայտնի է, որ ուստաց ար-  
շաւանքը թիւրքերի երկրի վրա սկսվե-  
ցաւ միաժամանակ մեր յարձակմունքի հետ  
Աֆգանիստանի վրա: Ռուսաց արշաւանքի  
աջողութեանը խանգարեցին իրանք թիւրք-  
մենները և ոչ թէ մեր յաղթութիւնները  
Աֆգանիստանի մէջ, Լորդ Սալիսբուրի նը-  
կատում է. «ինչ ուղում են ասեն նախկին  
միջնորդութեան աֆգանական քաղաքակա-  
նութեան մասին, բայց նա գոնեւ այն օ-  
գուտ տուեց, որ յաւիտեան հեռացրեց  
ուստաց դեպքանութիւնը Աֆգանիստանից  
և վերջ գրեց ուստաց դիպլոմատական  
ազդեցութեանը այդ երկրի մէջ»: Եւ զա-  
նազան պատճառներով թիւրքերը եւ լորդ  
աֆգանական պատերազմը արդարացիւր  
համար, բայց մինչև այժմ ոչ ոք չէր էլ  
մտածել ասել, թէ այդ պատերազմը սկս-  
վեցաւ ուստաց խաղաղ դեպքանութիւնը  
Աֆգանիստանից արտաքսելու համար: Ար-  
դեօք չէ մտածում լորդ Սալիսբուրի, որ  
մենք արտաքսեցինք ուստաց դեպքանու-  
թիւնը: Նախադասութիւնը մեզ բարեկամ  
դրացի պետութիւնը կարող է չը հաւա-  
նել: Այսքանը դիտեմք որ եթէ մեզ հա-  
մար այդ անկէն, մենք շատ դժ չէինք լի-  
նի: Առանց որ է և պատճառի արտասա-  
նած այդպիսի նախադասութիւնները կա-  
րող են յարուցանել փոխադարձ թշնամու-  
թիւն և անհաւատարմութիւն, որոնք առանց  
այդ էլ շատ շատ են բարձրանում Անգլիայի  
և Ռուսաստանի մէջ: Մի և նոյն ժամանակ  
լորդ Սալիսբուրի ճշգրտութեամբ չէ պատ-  
մում փաստերը: Եթէ նա մէկին արտաքսել  
և Աֆգանիստանից, դա ոչ թէ ուստաց դե-  
պքանութիւն է, այլ այդ երկրի օրինաւոր կա-  
ռավարիչ է մի Երեւանի, իսկ ուստաց դե-  
պքանութիւնը հեռացաւ Երեւանի հետ միա-  
ժամանակ: Կնչ կը վերաբերի մեզ, մենք երբեք  
չենք հեռանել այնպիսի քաղաքականութեան,  
որ բացառապէս անգլիական շահերն է ու-  
նեցել ի նկատի: Մենք աշխատել ենք գոր-  
ծել Եւրոպայի հետ համաձայնութեամբ և  
այդ մեզ աջողվել է: Զմարիտ է այդպիսի  
քաղաքականութիւնը մի փոքր դանդաղեց-  
նում է գործողութիւնը, բայց երբ նա վրձ-  
նում է մի բան, այդ վրձնը անփոփոխ է  
մնում: Գնեցի որ գործերի գրութիւնը իր-  
անդիայի մէջ, լորդ Զարաինգտոն ասաց  
մօտաւորապէս հետեւեալը: «Այդ հանգա-  
մանքների մէջ անկասկած յուսահատեցող  
շատ բան կայ: Բայց պէտք չէ մոռանալ,  
որ բոլոր շարքի պատճառը իրանական  
ժողովուրդի անմոռութիւնը չէ: Անցեալի մէջ  
Անգլիան էլ շատ սխալներ է արել: Այդ  
սխալները դեռ ուղղված չեն և, եթէ մենք  
մի կողմից պէտք է եռանգով գործադրենք  
ձեռնարկած միջոցները, միւս կողմից պէտք  
է գործենք անշափ համբերութեամբ:

ԿԱՌՈՒԻ ԱԶԳԱՅԻՆՆԵՐԸ  
Յաւօք սրտի կը կարգաւ մայրաքա-  
ղաքին լրագրութեանց մէջ մեր կաթոլիկ  
ազգայնոց մէջ կրկին ծագած յուզմունքն,  
որ կը դառնայ նոցա Գեր. Ագարեան Պաա-  
րիարքի ընտրութեան օրինաւոր կամ ապօ-  
րէն լինելուն վրա: Նոյնպէս վարչական խոր-  
հրդոյ անդամաց ընտրութիւնն իսկ ապօ-  
րէն և անկանոն կը հռչակուի: Կատուի թէ՛  
ընտրականներն ուստաց Պատրիարքական ըն-  
տրութեան չէին մասնակցած, ուստի ան-  
միջապէս հրաժարական տուած էին: Ուրիշ  
ոմանք ալ վերջին նստի մը մէջ՝ որ աղմու-  
կայից եղած էր՝ հրաժարելով խոյս տուած  
են ժողովէն: Իրաց այս վիճակ ի հարկէ  
միջնորդական չը կրնար լինել ընդհանուր  
չայ Ազգի համար, որք ասանց կրօնի խը-  
տրութեան մի Ազգ կը կազմեն, և պար-  
տին մի սիրտ մի հոգի լինել միակ նպա-  
տակ ունեւոր ազգային ընդհանուր լուսա-  
ւորութիւն:

Մի ուրիշ ցաւալի և գայթակալական օ-  
րինակ և է Գեր. Ագարեանի գեղեցիկ խոս-  
տանքներն հակառակ, որ էր հայերէն լե-  
զուն իւր Պատրիարքարանի պաշտօնական  
լեզուն ընել, հայագիր և տաճարաւոր տպաւո-  
ղաշտօնական գրեր հրատարակելը, որ եթէ  
ստոյգ է, չը կրնար համաձայն ի նորա պատ-  
ւաւոր խոստմանց և համակիր յայտարա-  
րութեանց զոր պաշտօնական այցելութեանց  
առթիւ և տեսակցութեանց մէջ հրապա-  
րակու խոստացած էր:

Զոգ չէ՛ կրօնը-ընտրում մարդկային հա-  
մոգման վրայ հիմնեալ կը լինի, կրնայ փո-  
խաւոր ըստ յոյդոյդ համոզմանց ուրիշ,  
բայց ազգութիւնը՝ ընտրութեան բնական ծը-  
նումն է, չէ կարելի փոխաւորան ինքար-  
կուի: Կրօնափոխ հայ մի միշտ հայ կը  
մնայ: Այսու անսակեալ պապական և  
բողոքական եկեղեցեաց յարեալ ազգայնեք  
Հայութեան անբաժանելի անդամներն են:  
Ուրիշ խնդիր է եթէ հայ մի անձամբ բըռ-  
նարաբէ գինքն իւր ծնող բնական Ազգէն

### ԱՌՍՏՐՈՒՆԳԱՐԻՍ

անջատուելու յամառութեամբ և ինքզինքն ազգային թիւէն պահանջէ:

Ուրեմն Գեր. Ազարեան, ինչպէս նաեւ բոլոր կաթոլիկ մեր ազգայինք հարազատ հայ են, ի՞նչ հարկ կը բռնադատեն զիրենք թըրքախօս լինելի: Որոյ արդիւնքն ուրիշ բան չը կրնար լինել բայց միայն նոր սերունդ մի պատրաստել որ բնաւ հայերէն չը հասկնայ, և հայերէն չը հասկնալով նոյն իսկ իւր եկեղեցին չը հասկնայ (քանի որ եկեղեցւոյ լեզուն հայերէն է և ոչ թըրքերէն): Եւ եւ կեղեցւոյ լեզուն չը հասկնալուն հետեւանքն անհաւատութենէն ուրիշ ի՞նչ կրնայ լինել: Հետեւանք՝ որ հակառակ է բուն իսկ վատկանքի որոշոյն, որ եկեղեցեաց լեզուն ներքն և ծէսերը անփոփոխ պահելու արտօնութիւններն առած է: Կ'երեւի թէ՛ Գերա. Ազարեան իւր այս հակազգային դրութեամբ կը փափագի կոչուի Plus catholique que le pape:

(Արշալոյս Արարատեան)

ՆԱՍԱԿ ԹԻԻՐԻՒՄԵՐ

Եւ ձեզ զրեցի արդէն մասնաւոր նամակով, որ ձեր համախոհները աշխատում են մի օրգան ունենալ հայոց դատի պատգամն նոյնպէս փարիզ և լոնդոն. այս մասին գանազան մարդկանց ձեռքով վաղուց արդէն բանակցութիւններ կ'են լինում: Հիմա՞ զորո՞ւմ են փարիզի մեր բարեկամ երկրաստորները, թէ մի առ մի բանակցելով բոլոր խմբագրութիւններէ հետ, նոքա կանգնեցնեն միայն երկու խմբագրութեան վրա, այն է «Union Republicaine» եւ «Justice» լրագիրները: Սակայն ի՞նչ պայմաններով կարելի է իւրաքանչիւրը դրացնել ծառայեցնել արեւելեան ազգերից մասնաւորապէս հայոց շահերին, այդ մասին շատ բաներ են գրում, որոնց գլխաւոր էութիւնը ի հարկէ զբաղակաւ օգնութեան մէջ է: «Justice» օրինակ պահանջում է տասը հազար ֆրանկ մի տարվայ համար, խոստանալով այդ ժամանակ առանձին տեղ բաց անել յատկապէս հայոց հարցի համար: Իսկ զարդ «Union Republicaine» լրագիրին, նորա պահանջները դուրսէ, շատ անկէ հեշտ լինելը լրացանել, եթէ Կ. Պոլսի հայերը մարդ լինէին, այն է, կարողանային բարոյապէս թէ նրկապէս շահել այդ լրագրի: Կ. Պոլսի թղթակցի սիրտը, հազարովի նրան միշտ հարկաւոր տեղեկութիւններ և յատկապէս մասնագետներով նրան պարտաւարտած մեծարարք, որովհետեւ այդ լրագիրը դրամի կարօտ մի խմբագրութիւն է, այլ մի և նոյն ժամանակ մեծ վստահութիւնը ընծայող է իւր սեփական թղթակցներին: Բայց ո՞վ է նայողը այդ թղթակցները վրա, երբ նոքա իրանք կաղաչեն Աստուծու անունով իրանց շնորհակալ և նոր նոր տեղեկութիւններն առ շայտտանի մէջ անցող դործերի վրա: Մինչդեռ Կ. Պոլսի տիրացուները բոլոր բնուր ձգած գրեթէ միայն մի երկու մարդիկներով վրա, իրանք զբաղված են «Թէրքիմէ նին» օրը մէկ պուղ ինտիմացիներ և կեցողութիւն հազարովի իրանց արարքները քննադատողներ և զեղծումները հարուածողներ վրա, վստաւորով կը տեսնենք միայն մի երկու ձեզ յայտնի անձինք, որոնք է շի նա հատակ դառած, ամեն դործի ետեւից պիտի վազեն և ամեն տեղ հասնեն, քանի որ ուրիշները ոչինչ չեն անում:

Իսկ լոնդոնի մէջ աշխատող միայն աշխարհ և գործունեաց պ. Յակոբեանն է, որը պարբերաբար աղբու յորուածներ է գետնուր «Times» ի մէջ հայոց մասին: Թէպէտ այս աղնի երկրաստորը մեծ վստահութիւն և համարում է վայելում «Թայմզ» խմբագրութեան կողմից, բայց ինքը նրկապէս շատ նեղված է, ասում են, և Մանչեսթրի վաճառական հայերն էլ մեծ մասամբ լինելով լոկ նիսիա հայերն ոչնչով չեն օգնում խեղճ երկրաստորին: Բայց որչափ էլ մեծ ազդեցութիւն ունենայ «Times»-ը, դարձեալ նրա պրօպագանդայինքն մեծ է և քնդարձակ, որ հայոց հարցին նուիրելի սխեմաները շատ նեղ և սահմանափակ կը լինեն, վստաւորով լոնդոնի կը լինէր, եթէ լինէր աւելի փոքր լրագիր աւելի նեղ քաղաքական պրօպագանդ, քան թէ «Թայմզ»-ը: Այդպիսի լրագիր, օրը պի-

տի պարագովի միայն Անգլիայի արեւելեան շահերով այս օրերս հիմնվելու վրա է: Նորա խմբագիրը կը լինի «Standard»-ի նախկին թղթակց պ. Ֆէյրման, որը մօտ տասը տարի արեւելքումն է ապրել և քաջ գիտակցաւ սիրել արեւելեան հարցը իւր մանրամասնութիւններով: Որովհետեւ այս օրերս պատրաստվում էր միկնիլ դէպի Անգլիա՝ վստաւորով ինձ յաջողվեց տեսակցել պ. Ֆէյրմանին հետ: Նորա լրագիրը կը լինի անգլիերէն և ֆրանսերէն «Gazette Orientale» անունով: Պ. Ֆէյրմանը մեծ յօժարակամութիւն ցոյց տուաւ հայոց հարցին նոյնպէս ընդարձակ տեղ տալ, ինչպէս «Journal d'Orient»-ը եթէ միայն որչափ և ինչ քաջ աշխատեցին: Դրան հայոց ազգից բաժանորդագրութեանց մէջ, ի՞նչ դարձանային քան է, որ մի տարի լրագիր նրկապէս քաջակերպութիւն է պահանջում հայերից, երբ նոյն իսկ հայոց թղթերը (այն էլ իրանց չբռն հայ) ասողները իրանց ամբողջ կենսանքի մէջ ոչ մի տող չը գրեցին, առանց աչքի տակ ունենալու իրանց զրպանի շահերը չը նայելով որ արդ հայ թիւերը և րը միշտ խաբած են և իրմարի տեղ դրած հայ ժողովուրդը, ձեռնալով նորա առաջ կրօնի և սկզբունքի՝ և այլն պաշտպան: Թէ ինչպէս սկզբունքի պաշտպան են, տեսնում ենք նոյնա բուն նրկապէս շահերից:

Եւրծեմ որ պ. Ֆէյրման ձեզ ևս զրեցի իւր լրագրի մասին, խոստանալով մի և նոյն ժամանակ միշտ բարեկամաբար վերաբերվի մեր տեղակալին շահերին: Սակայն տարակոյց չը կայ, որ «Gazette Orientale»-ը եթէ բաժանորդ ունենայ Ռուսաստան, նոյնչափ հեշտութեամբ մտած կը դառնայ անտեղ, ինչպէս «Journal d'Orient»-ը: A propos. եթէ գտնվում են հիմա ուրիշ լրագիրներ ևս, որոնք ուշագործվում են դարձում հայոց դատին պաշտպան կանգնելու կարողութեան վրա, դրանով մենք պարտական ենք զրկաւորապէս «Journal d'Orient»-ի դրած ազդեցութիւնը հայոց ազգի մասին, որով միշտ լրագիրը համայն իւրօրային առաջ մեծ հաշակ և նշանակութիւն է տալիս թիւրքաց հայերին, իստեղով նրանց մասին հաւատարապէս յայտնելով, սերբերէն, բուլղարներին և դարձադրցիներին, որոնց շահերը ևս չը շնորհակալ են: Այնքան թե՛ բան է հէնց այսպիսի մի զարկ տալը հայոց ազգի նշանակութեան, միտք ներշնչելով ուրիշներին, թէ այս ազգը աւելի կենդանութիւն և կարող է ցոյց տալիս իրան վերաբերելով դատի մէջ, քան թէ ուրիշները, արտեղ ի հարկէ Ռուսաստանը օգնութիւնը ևս մեծ նշանակութիւն է ստանում, քանի որ տաճարայնոց թիւրքերը այդչափ ապահովված է իրանց Ռուսաստանը եղբայրների մասնակցութեամբ:

Այդպիսով տեսնում էք, որ ամեն կենդանութիւնը շարժում է շնորհ կայ ու ինչ կեցողութեամբն ապրողները հայոց մասին օտար լրագիրներով միջոցով, միայն Ս. Պետերբուրգի և Մոսկւայի մօտ 300 հայ Ռուսաստաններ են, որոնք մնում են ընկղմած իրանց մշտական թղթութեան մէջ: Ստանալով այդչափ հայ լրագիրներ, այդչափ տեղեկութիւններ կ'ովաստից կամ օրիշ տեղերից, մտածում են ուրա պարկեղ տառնձին յորուածներին կամ փոքրիկ բրօշուկներին ձեռք ամբողջել նոյնա և արարածի հայոց հարցին ու է՛ առբն չուրիս ունեցող և մեզ հարկաւոր չը շահանքի մէջ: Երեւի էլ պատճառ կը բերեն ժամանակի պակասութիւնը. թող պ. Բաֆֆին ասեն այդպիսի բաներ օգուտ քաղելով նորանց, որ Բաֆֆին նկարագրեց նոյնա պատկերը առանց նոյնա մէջը մտնելու, քայց ոչ այնպիսի մի մարդու ասին, որը ձանաչում է նրանց, իրանց մեղք իրականութեան մէջ: Երբ գանազան անձինք նոյնանց հայոց լեզու կուսանեն համարաբանի մէջ վաղը միւս օր այդ լեզուի մագիստրոսութեան քննութիւնը անցնելու համար. թող այդպիսիները դեռ առանց մագիստրոս լինելու իրանց հայութեան հէնց մի փոքր ապացոյցը տան, ազգին որ յետոյ էլ կարելի լինի հաւատար, որ այդ մագիստրոսներից էլ մարդիկ զուրկ գան: Գրեգոր Նիկողոսեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Իրիւնի «Tageblatt» լրագիրը տպեց իւր համարի ձեւադրում լոնդոնից հաղորդած լուրերը, որ իւր թէ Ռուսաստանը գաղտնի բանակցութիւններ ունի Թիւրքիայի հետ, պահանջելով որ

Բ. Գուրը զիջանի Ռուսաստանին թիւրքաց Հայաստանը պատերազմական ծախսերի փոխաւէն: «Сорядок» լրագիրը ասում է թէ այդ տեսակ սուտ լուրերը ապացոյց են որքան քիչ է ճանաչում Եւրօպան Ռուսաստանին: Ռուս լրագիրը աւելացնում է թէ այդ լուրերը արդէն հերքեց «Journal de St. Petersburg» լրագիրը: —Վիեննայից հաղորդում են որ Բոսնիայում և Հերցեգովինայում ապստամբութիւնը սաստկանում է:

—Փարիզից հեռագրում են որ ֆրանսիական սենատի ձախ կողմը որոշեց վերաքննել սահմանադրութիւնը:

—Գերմանական «National Zeitung» լրագիրը հաւատացնում է որ Լուով պապը զիտաւորութիւն ունի թողնել Բապիստ և տեղափոխվել ամբողջ վատկանքով Պրուսիայի Ֆրեյդա քաղաքը: Առաջ պապը զիտաւորութիւն ունէր տեղափոխվել Մալտա կղզու վրա, որ ինչպէս յայտնի է պատկանում է Անգլիային:

—Գերմանական բալթիկ թիւրքերի քննութեան ժամանակ իշխան Բիսմարկ առաջարկեց 85,000 մարդ նշանակել պետական տնտեսական խորհուրդ հիմնելու վրա: Բալթիկ թիւրքերը մարդկային կասկածում է որ այդ տեսակ տնտեսական խորհուրդը հաստատելով, իշխան Բիսմարկ կամենում է անդամաւորել գերմանական պարլամենտի ազդեցութիւնը ու նշանակութիւնը: Երկար վիճաբանութիւններից յետոյ, որոնց մէջ մասնակցեցան բոլոր կուսակցութիւնները, Բիսմարկի առաջարկութիւնը մերժվեցաւ 183 ձայնով: Բալթիկ թիւրքերը 169 ձայնով զլմ:

—Լոնդոնի լրագիրները հաղորդում են որ նոյեմբերի 14-ին Բէլգիայի մէջ իւր արտասանած ճառի մէջ մարկիզ Լաբալմոնտ Խոսեց, Իւլանդիայի և արեւելեան ինդիա մասին: Լաբալմոնտն ասեց որ եթէ Եւրօպան կամենում է անխախտ պահպանել ընդհանուր խաղաղութիւնը, նա պէտք է ճշդութեամբ դործագործի Բերլինի կոնգրէսի բոլոր յօդուածները: Եւ ոչ թէ այս կամ այն պետութիւն, քայց ամբողջ Եւրօպան պէտք է վերահսկի Թիւրքիայի վրա Բերլինի դաշնագրի ճշգրտութեամբ կատարվելու վերաբերութեամբ:

ԻՍԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Օրիորդ Մէրի Ալէն, որը 1876 թ. աւանտի քննութիւն տալով զօրաօդի աստիճան էր ստացել, այժմ բնակւում է Ֆիլիպթոնի և առողջապահութեան պրօֆեսոր Վասթը-Կոլեջի մէջ: Նիւ-Եորկի նահանգում Այդ իրական կողմէ հիմնվել է 1861 թ. աւանտի գաղութուր չինոյզ Վասթի կողմով թողած 500 հազար դոլար գումարով որի անունը և կրում է հիմնադրութիւնը: Կօլեջում աւարտող կանանց թիւը իւրաքանչիւր տարի հասնում է մինչև 400 հոգի:

—Վիեննայում այժմ ցոյց են տալիս դարմանաւոր երկու օրեակներ, Գնախօր և Բաբալոս Գիօսի: Երկուսն էլ միասին ունեն միայն երկու օրը և մի փոքր նրանցից ամեն մէկը ուտում, խմում, քնում, խօսում և մտածում է առանձին և կարող են մինչև անգամ հիւանդանալ առանց միմեկին զննելու:

—Երկրագնաւոր վրա պարօղ մարդկանց թիւը հաշուում են 1300 միլիոն: Ամբողջ մարդկութիւնը կառավարվում է 12 կայսրներով, 25 թագաւորներով, 47 իշխաններով, 17 սուլթաններով, 12 խաններով, 6 մեծ-դուքսներով, 1 փոխարքայով, 1 թէյով և 28 նախագահներով չը հաշուելով վարիսի ցեղերի կառավարիչներին:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆՑ  
Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 նոյեմբերի: «Прав. Вѣстн.» լրագիրը հաղորդում է. հոգաբարձական խորհուրդը վճռեց 300,000 ռուբլուց 10% տոյ այն անձին, որի ցուցմունքներով կը գտնվի Միկնիցու մօտ կարած այդ գումարը:  
ՎԻԵՆՆԱ, 27 նոյեմբերի: Թատրոնական հրդեհի հետեւանքները սարսափելի են: Բաղաւրը զարհուրած է: Բօրսան և պար-

լամենար փակված են: 600 աւելի զոհեր կան: Ամեն տեղ նուիրաւորութիւններ են հաւաքվում յօգուտ վնասվածների ընտանիքներին:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 նոյեմբերի: Հեծեւազօրքը վերակազմող մասնաժողովը հիմնված է Օրբուշեվի նախագահութեամբ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 29 նոյեմբերի: «НОВОЕ Время» լրագիրը հաղորդում է. լուր է տարածված, որ իշխան Գոնդուօփ-Կօրսա-կով նշանակվում է կովկասեան զինուորական շրջանի գործերի հրամանատար և Կովկասեան քաղաքական մասի գլխաւոր կառավարիչ: Կովկասի հրամանատարի և փոխարքայի կոչումը ոչնչանում է: մի և նոյն ժամանակ լինելու են հետեւալ փոփոխութիւնները. Ստաւրօպոլեան նահանգը և Կուբանեան շրջանը անցնում են ներքին գործերի միւնիստրի իրաւասութեան տակ, մի և նոյն ժամանակ զրանց սահմաններում կ'զած գործերը կը միանան Խարկովի զինուորական շրջանի հետ: Չերնոմորեան շրջանը միանում է Կուբանի շրջանի հետ, Սուխումի բաժինը՝ Քուկույսի նահանգի հետ: Բալթիկ թիւրքերը մտադրել են միացնել Գոլիշայիսի նահանգի հետ, Զաքարալի շրջանը Թիւրքիայի նահանգի հետ: Առում են, որ քաղաքական կառավարութեան կազմակերպութիւնը կը մշակվի այն ժամանակ, երբ իշխանը կայցիլէ իրան յանձնված երկրը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 յունիսի: Սպասում են, որ կը հաստատվեն կանձներ օֆիցիւրների պահեստի մասին, որի մէջ կը հաշուեն 1874 թ. աւանտի ծառայութիւնը սկսող և այժմ հրաժարական տուած օֆիցիւրներ, նոյնպէս և նրանք, որոնք 1874 թ. 21 տարեկանից աւելի չեն եղել: Պօլիցիայի միջոցները Մոսկւայի և Ս. Պետերբուրգի մէջ ընդարձակվում են: Նիկոլայեւսկայա երկաթուղին առանձին յարմարութիւններ է ձեռք բերում ձանապարհորդների վրա հակելու համար: Պատուաւոր հոգաբարձուները իրանց միջոցներից կամենում են լրացնել Միկնիցու մօտ կորած 300,000 ռուբլ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 նոյեմբերի: Նոյեմբերի 30-ին կէսօրից յետոյ ժամի 1-ին դատարանը յայտնեց դատաւճիւրը Մրօվինսկու: Տեղեկի և Ֆուրսովի մասին, զրկել նրանց բոլոր իրաւունքներից և արտօնութիւններից, Մրօվինսկու գնաւորական կոչումից էլ և արքայի Արխանգելսկի բնակվելու համար, արգելելով հետեւալ այդ տեղից երեք տարեկան ընկալելու: Այդ դատաւճիւրը ենթարկել նորին Մեծաւթեան հայեցողութեանը: Կատաւորական ծախսերը դնել դատապարտութեան վրա: Մինչև դատաւճիւրը օրինական ըլծ ստանայ յանցաւորներին անայն կալանաւորութեան ենթարկվել: Կատաւճիւրը վերջնականապէս կը յայտնվի գեկսեմբերի 12-ին: Թիւրքիայի և Գոլիշայիսի նահանգներին ազնաւորութեան միջնորդութեան համեմատ այդ նահանգների ընտրողական պաշտօններին ցնդը նուազում է:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 նոյեմբերի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 94 ռ., երկրորդ 92 ռ., երրորդ 90 ռ., չորրորդ 91 ռ., հինգերորդ 91 ռ., չորրորդ 90 ռ., առաջին փոխաւորութեան տոմսակը արժէ 222 ռ. 75 կ., երկրորդ 215 ռ. 75 կ., արեւելեան առաջին փոխաւորութեան տոմսակը արժէ 90 ռ. 25 կ., երկրորդ 90 ռ., երրորդ 90 ռ., օսկի 7 ռ. 77 1/2 կ.: Ռուսաց 1 ռուբլ Լոնդոնի վրա արժէ 25,40 պէնս, Ռուսաց 100 ռ. Համբուրգի վրա արժէ 217 մարկ 50 պֆ., Փարիզի վրա 267 ֆրանկ 50 սանտիմ: Բօրսայի արամապրութիւնը ամուր է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Երաժշտական խանութում, որ գտնվում է Արծրունու գաղլիքայում, բնասորանի մոտ, երաժշտական իրերով առուտուրը շուտով կընթացնի պատճառով, այս նոյեմբերի 6-ից սկսած վաճառվում են սաստիկ արժանի գներով նոսրեր, երաժշտական գործիքներ, ջութակներ, ֆլեյտաներ, կլավարներ, վիոլոնչելներ, զիտարներ և այլ երաժշտական վերաբերյալ իրեր րոպեից մինչև 80 ԿՕՊԷԿ ԶԻՋՈՒՄՈՎ:

10—10

ԲԱԹՈՒՄԻ

ԿՕՄԻՍԻՈՆԵՐ

ԱՐԵՍԿ ԾԱՏՈՒՐԱՆՈՒՆԵՐ

Ընդունում է տվեն տեսակ պատուէրներ, յանձնարարութիւններ և ապապարանք:

2—20

Լոյս տեսաւ «Տասն պատգամք կամ Բարոյական Պարտադրոյց» կրօնական գրքովը: Ա. գործ Արսէն քահանայի Բագրատունի ծախում է կենտրոնական և կողմնական գրավաճառանոցներում, գինն է 25 ԿՕՊ:

ԸՆԴՈՒՆՈՒՄ ԵՄ

Կենդեցական պատկերների, քանդակագործ և ոսկեգործ աշխատանքներ: Պատկերները լակով ծածկում են և ապակիով շինում են ընկուզենու շրջանակներ: Այս բոլոր աշխատանքները ինձ մօտ ուրիշներից աւելի էժան են կատարվում: Հասցէն. Սապօրնայա փողոց տուն ՁՋ 8, իշխան Մելիքովի տան ետեւը: Դաւիթ Գիգարի:

2—5 (5)

Արտասահմանից եկած մի վարպետ շինում է պատրաստ և զարգով ընդունում է էժան ու լաւ քան թէ ուրիշներ, կենդանակերպ ծաղիկներով զանազան տեսակ գերեզմանական արձաններ: Հալվարար, Շիրաճխանայի վերի ծայրը, ապակեայի կարգը № 32 խանութը:

15—15

ՎԻԵՆՆԱՅԻ ՄԵԲԷԼ (աթոռներ և բաղկաթոռներ) ծախվում են մեծ քանակութեամբ և մանր, միջի փողոցում կատարվաց փողոցի անկիւնում ՄԻՔՍԷԼ ՏԵՐ-ՆԻԿՈԼՈՍԵԱՆԻ պահեստում:

Օտարաքաղաքացիք կարող են գիմել այս հասցէով. Тифлисъ, Михайлу Н. Теръ-Никогосову.

114—150

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

|                                                        |       |
|--------------------------------------------------------|-------|
| Գ Խ Ե Կ Ե Լ Ե Լ                                        |       |
| 1. Աղայեանց՝ Ուսումնի մայրիկի լեզուի, ա. տ. չորր. տիպ. | 20 4. |
| 2. Տէր-Վաթեան՝ РУССКОЕ СЛОВО, հինգեր. տիպ.             | 45 —  |
| 3. Կոստանեանց՝ Ծաղկաբաղ շրջան Ա. (զրարար)              | 25 —  |
| 4. — — — — — շրջան Բ. (նշնպէս)                         | 60 —  |
| 5. — — — — — շրջան Գ. (նշնպէս)                         | 40 —  |
| 6. — — — — — զրարարի հոլովումն                         | 15 —  |
| 7. — — — — — զրարարի խոնարհումն                        | 25 —  |
| 8. Տէր-Յակոբեանց՝ Հայաստանի աշխարհագրութիւն.           | 60 —  |
| Ը ն թ ե ր ց ա ն ու թ ե ա ն գ ր ք ե ր                   |       |
| 1. Աղայեանց՝ Անահիտ, հին զրոյց.                        | 50 —  |
| 2. Ար. ք. Բագրատունի՝ տամի պատգամք                     | 25 —  |
| 3. Տէր-Միքայէլեան՝ Թղուկ, Թարգ. Դօդէից                 | 50 —  |
| 4. Լալայեան՝ ԱՏճէգի տպարակը                            | 10 —  |

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՅՈՒՄ

Մամուլի տակ են՝ Մանդիկեանցի «Նահապետական» և «Դիւցազնական» աշխարհները և Տէր-Վեհապետի «Մայրենի լեզու» երկրորդ տարի: Շուտով մամուլի տակ կը մանր՝ Սրբազան պատմութիւն հին Կապուսի Հայորդոն:

91 Piccadilly W.  
Londres 12 Octobre 1881.

THE ORIENTAL GAZETTE  
LA GAZETTE ORIENTALE

Le premier Janvier prochain paraîtra, à Londres la Gazette Orientale, journal hebdomadaire, publié en anglais et en français, consacré spécialement aux questions d'Orient et rédigé par des écrivains ayant une longue expérience du journalisme et la connaissance intime et personnelle des hommes et des choses de l'Orient.

Ce journal sera largement répandu dans tout l'Orient et parmi les personnes qui s'intéressent aux affaires de ces pays; il est appelé à prendre, sous peu, dans la presse, le premier rang comme organe spécial de toutes les affaires orientales et à rendre d'immenses services, non seulement aux colonies européennes et aux races chrétiennes de l'Orient, mais encore à porter la lumière dans certaines questions particulières et à en faciliter la solution. Il a donc droit, surtout en ce moment, de compter sur l'appui sympathique de tous ceux qui ont des intérêts quelconques dans ces contrées, et cela, en raison de la difficulté et même souvent de l'impossibilité de discuter librement, dans la presse locale, les questions du plus haut intérêt.

La direction prend l'engagement formel de faire parvenir son journal, quoi qu'il arrive, à tous ceux qui peuvent avoir un intérêt quelconque, à connaître la vérité, et elle garantit d'avance aux abonnés la réception régulière de chaque numéro.

Elle se fera toujours un devoir de faire bon accueil à toutes les communications d'un intérêt général, et de défendre la cause du droit, de la justice et de la vérité en assumant toute la responsabilité de ses articles et correspondances, sauf le cas où ses correspondants demanderaient la publication de leurs noms.

Le prix de l'abonnement est de 40 francs par an, celui des insertions est de 60 centimes la ligne.

E. St. J. Fairman T. Harris  
Rédacteur Secrétaire.

P. S.— Un des rédacteurs du Journal se trouve actuellement à Constantinople pour recevoir les communications personnelles ou confidentielles que l'on peut également adresser à M-r le Rédacteur en chef de la «Gazette Orientale», aux soins de son agent

Mr R. F. Routh

№ 3 Halagian Han, Galata, Constantinople

ՆՈՐ ԴՈՒՐՍ ԵԿԱԾ ԳՐՔԵՐ

|                                                                  |       |
|------------------------------------------------------------------|-------|
| Որոնք վաճառվում են ԶԱԲԱՐԻԱ ԳՐԻԳՈՐԵԱՆՅԻ «ԿՈՎԿԱՍԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՅՈՒՄ |       |
| 1 Բագրատունի՝ Տասն պատգամք. գինն է                               | 25 4. |
| 2 Աղայեանց՝ Անահիտ, հին զրոյց.                                   | 50 "  |
| 3 Թղուկ, Թարգ. Տէր-Միքայէլեանցի.                                 | 30 "  |
| 4 Աղբառ մանուկ կամ բարոյական վէպ.                                | 20 "  |
| 5 Խալաթալա Սուլեյմանեանցի.                                       | 50 "  |
| 6 Զորս մանրամէլ Տէր-Աւետիսեանի.                                  | 20 "  |
| 7 Հայերէն լոսո երկխոսների համար.                                 | 50 "  |
| 8 Տէր-Ակոբեանց՝ Հայաստանի աշխարհագրութիւն.                       | 60 "  |
| 9 Կոստանեանց՝ Գրաբառ բայերի խոնարհում.                           | 25 "  |
| 10 Թագուրեան՝ Փորձ լեզուագիտական հետազոտութեան.                  | 50 "  |

Եւս ստացուել է Բոստովի Տէր-Արամեանցի 1882 թուի ՕՐԱՅՈՅՑ, գինն է 15 ԿՕՊ. գումարով առնողներին զիջումն կը լինի:

Въ Редакции газеты

«МШАКЪ»

Продается

„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ  
ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“

Д. Григорія АРЦРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.

Մէլիք-Բէգլարեանցի մանաւոր Ռէպա-կան ուսումնարանի երկրորդ դաստան հայ աշակերտները թարգմանել են 1880 թուին «Ոգնութիւն Մայրերին» ուսերէն պատկերազարդ մանկական ընթերցանի գրքովը, հեղինակութիւն Սոկրատիսի և շուտով կը ապագովի գրքովի ուսերէն վերնագիրն է «Въ помощи матерямъ» Соковниной. Նոյն ուսումնարանի եր-մորդ դաստան աշակերտները թարգմա-նում են այժմ «Собрание арифметичес-кихъ задачъ. Арбузова.» թողովածու թուաբանական խնդիրների Արբուզովի:

ԲԷՍՏՈՐԱՆԸ

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԹԱՏՐՈՆԻ ՄՕՏ

Մի նոր տիրոջ ձեռքն անցնելով, ստացել է այժմ մի բոլորովին այլ և ԳԵ-ՂԵՑԻԿ ՏԵՍԻ, ունի ընտիր ձԱՇԵՐ և ԸՆԹՐԻԲԵՆԻՐ, նոյնպէս և լաւ ԽՄԻՉԲ-ՆԵՐԻ: Գները շատ էժան են:

10—20

144 Արծրունու գաղլիքա 144  
ամենաէժան պահեստ  
մեքէլի և հայերիներ:

Վ ա ճ ա Վ զ ի Վ ե ն 15,000 ամաններ  
առաջին տեսակի 15 Կ. հատը, 12,000  
խրաւաւայի բաժ ա կ ն ե ր 25 Կ. հատը,  
10,000 բօկ ա լ և բաժաններ 10 Կ. հա-  
տը, 10,000 մա տ ու լ ց ա բ ա ն ն ե ր և կող-  
պէքներ 15 Կ. հատը, 10,000 ա ս ե ղ  
8—40 Կ. հարիւրը, 10,000 պնալներ  
5 Կ., 5,000 շիշ պօր տ-վէյն և խ ե ր ե ս  
1 Բ. հատը, 2,000 արշին կ լ է ո ն կ ա  
60 Կ.—2 Բ. արշինը, 2,000 զիւժին մա-  
տ ի տ ն ե ր և զրչակութիւն 8 Կ. զիւժինը,  
2,000 Փ. հնդկական բրինձ 7, 8 և 10  
Կ. Փունտը, 1000 Փունտ լէպէօշկա 50 Կ.  
Փունտը, 600 անգլիական բ է վօ լ վ ի ր  
ն ե ր 4—34 Բ. հատը, 300 անգլիական  
հ ր ա ճ ա ն ն ե ր 20—100 Բ. հատը, զրապ,  
տ ր ի կօ, ա լ բօ մ ն ե ր, ձմեռայ պայտօներ,  
գ լ խ ա ր կ ն ե ր, վարաիկներ, հալուստ կ է ս  
գ ն ո վ ի Ծախվում է ԱՆԳԼԻԱԿԱՆ  
ԽԱՆՈՒԹԻ ԴՋԵ: Նոյն տեղը ծախվում  
է Ծովային ԽՈՏ պուրը 2 Բ. 50 Կ.:  
12—60